ՀՏԴ 316.74: 796 DOI: 10.53068/25792997-2022.1.5-20

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՍՊՈՐՏՈՒՄ

Դասախոս Ա.Վ. Չախմախչյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail: anna.chakhmakhchyan@sportedu.am

Առանցքային բառեր: Սպորտային ազգայնականություն, էթնիկ ազգայնականություն, ազգային քաղաքականություն, ազգային գաղափարախոսություն, օլիմպիական գաղափարախոսություն, գլոբալ սպորտային մշակույթ:

Հետազոտության արդիականություն: Գլոբալ փոփոխությունների համատեքստում սպորտի՝ որպես սոցիալական երևույթի, նրա ազդեցության և դերի ուսումնասիրություններն առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերել: Առավել ուշագրավ է ազգայնականության և ազգային քաղաքականության թեմայի ուսումնասիրությունը: Վերջին ժամանակաշրջանում սպորտի բնագավառում տեղի ունեցած իրադարձությունները մատնանշում են սպորտային ազգայնականության զարգացման մակարդակի մասին: Սպորտային ազգայնականությունը հասկանալու համար անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ, թե ինչպիսի դեր ունի սպորտը էթնիկության պահպանման, արժեհամակարգի փոխանցման (մշակութային տրանսմիսիա) գործընթացի մեջ, որոնցով անհատն իրեն զգում է ամբողջի մաս:

Սպորտի, ազգայնականության և քաղաքականության կապերի ուսումնասիրությունն արդիական խնդիր է: Սպորտը՝ որպես սոցիալական երևույթ, կրելով ազգայնականության դրսևորումներ, երբեմն օգտագործվում է միջազգային քաղաքականություն կառուցելու (օրինակ՝ 2008թ. Հայաստանի կառավարության կողմից իրականացված «*ֆուտբոլային դիվանագիտություն*»-ը), էթնիկ ինքնության պահպանման (*շոտլանդացիներ, իռլանդացիներ*), միջազգային ասպարեզում պետության հեղինակության բարձրացման («*Ֆորմուլա-1*»-ի *ավտոմրցաշարի Գրան պրի Բաքվում*) և այլ հարցեր լուծելու համար:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ազգայնականության և ազգային քաղաքականության տեսական, գործնական դրսևորումները և հեռանկարները սպորտում:

Խնդիրներն են՝

- բացահայտել սպորտում ազգայնականության ի հայտ գալու նախադրյալները, զարգացման օրինաչափությունները, խնդիրները և հեռանկարները,

• բացահայտել «սպորտային ազգայնականություն» երևույթի բնույթը,

• ուսումնասիրել սպորտային մրցումները՝ որպես ազգային գաղափարների և քաղաքականության տարածման և իրականացման գործիք:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք գրական աղբյուրների ուսումնասիրման, ստացված տվյալների վերլուծման և համադրման, էմպիրիկ՝ նկարագրում, համեմատում, դիտարկում մեթոդներից:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հետազոտման բուն թեմային անդրադառնալուց պետք է հասկանալ, թե ի՞նչ է իրենից ներկայացնում ազգայնականությունը: Ազգայնականությունը (նացիոնալիզմ) սոցիալական երևույթ է, որի օբյեկտն ազգն է («natio» - ծննդավայր): Այս երևույթի բնորոշման շուրջ գոյություն ունեն զանազան տեսակետներ: Եթե փորձենք ընդհանուր սահմանում տալ, ապա ազգայնականությունը քաղաքական գաղափարախոսություն է ազգի՝ որպես բարձրագույն արժեքի մասին, կամ այլ կերպ՝ անհատների կողմից ազգային արժեքների գիտակցում այլ արժեքների շարքում: Երկար տարիներ խորհրդային և հետխորհրդային գիտական գրականության մեջ այն ներկայացվել է միայն որպես բացասական երևույթ, քանի որ սահմանը ազգայնամոլության հետ հստակ չէր: Ազգայնականության առաջացման պատճառները քննարկելիս պետք է առանձնացնենք 3 գիտական ուղղություն՝ պրիմորդիալիզմ, մոդեռնիզմ կամ կոնստրուկտիվիզմ և էթնոսիմվոլիզմ: Ներկայումս գերիշխում է մոդեռնիզմի կամ կոնստրուկտիվիզմի տեսությունը: Այս տեսության ներկայացուցիչները (Է. Գելներ, Բ. Անդերսոն, Է. Հոբսբաում և այլք) ազգայնականությունը համարում են նորաստեղծ, ժամանակակից երևույթ, որի հիմքը ոչ թե էթնիկությունն է, այլ տնտեսությունը և տեխնոլոգիական զարգացումները:

Է. Գելներն իր «Ազգեր և ազգայնականություն» գրքում ազգայնականությունը ներկայացնում է որպես քաղաքական սկզբունք, որի համար առաջին պահանջներից է քաղաքական և ազգային միավորների համընկնումը [2], այն է՝ կառավարողները և ենթարկվողները («պետությունը» և «ազգը») պետք է (ըստ ազգայնականների) նույն էթնոսը ներկայացնեն: Էթնոսը մարդկանց խումբ է, որոնք ունեն մշակութային որոշակի առանձնահատկություններ, գիտակցում են իրենց ընդհանրություններն ու տարբերությունը՝ նմանատիպ խմբերի հետ համեմատած [5]: Ազգայնականությունը դիտարկվում է որպես ազգի և պետության միասնականություն. առանց մեկի մյուսը թերի է: Այս պարագայում պետությունն է հաստատում պետական լեզուն, կրթական համակարգը, վերահսկում մարդկանց տեղաշարժը, որից հետևություն ենք անում, որ պետություն գոյություն ունի այնտեղ, որտեղ ձևավորվել են կարգերը

պահպանող հատուկ մարմիններ՝ ոստիկանություն և դատարան [2]: Տեխնոլոգիաների և տնտեսության զարգացումն իր հերթին հանգեցրեց մարդկանց հաղորդակցման, և նախկին ինքնորոշման բնութագրիչ գործոնները ենթարկվեցին փոփոխման: Մենք «նույնն» ենք, ոչ թե որովհետև նույն հավատալիքների համակարգն ենք կիսում, այլ «նույնն» ենք, որովհետև նույն ազգից ենք՝ ցեղային պատկերացումները մատնվում են մոռացության: Այսպիսով՝ ազգայնականությունը դիտարկվում է՝ որպես ազգային շարժումների և արդյունաբերական հեղաշրջման արդյունք (19-րդ դարի 20-ական թթ.): Գելները պնդում էր, որ «ազգերը ստեղծում են մարդիկ», այսինքն՝ «ազգ» հասկացությունը մարդկային համոզմունքների, գաղափարների և սովորությունների արդյունք է [2]: Մարդկանց խումբն ազգ է դառնում, երբ այդ խմբի անդամներն ընդունում են մեկը մյուսի՝ այդ ազգին պատկանելիությունը և վերցնում պատասխանատվություն մեկը մյուսի համար: Բ. Անդերսոնը [1] ազգը բնորոշում է՝ որպես պատրանք (Imagined communities - «Պատկերացրած հանրություն»). ցանկացած անհատ, որը պատկանում է տվյալ ազգին չի կարող բառացիորեն փոխկապակցվածության մեջ լինել այդ ազգի բոլոր անդամների հետ, բայց միևնույն ժամանակ գիտակցում է իրենց ընդհանրության, մեկ խմբին պատկանելը: Ըստ Անդերսոնի՝ ազգայնականությունն առաջացել է տպագրության առաջացման և զարգացման հետևանքով, ինչը բերեց տպագրական կապիտալիզմի, այն է՝ լայն զանգվածների մեջ տարածել մեկ ընդհանուր լեզու, որի միջոցով էլ մարդիկ միավորվեցին մեկ խմբի «ազգի» մեջ [1]: Կրեյգ Կալհունն իր «Ազգայնականությունը և էթնիկություն» հոդվածում ազգի էությունը բնորոշում է ինքնավար պետություն ունենալու բացառիկ իրավունքով՝ անկախ էթնիկական կազմից [7]:

Ըստ էթնոսիմվոլիզմի տեսության ներկայացուցիչների՝ ազգը և ազգայնականությունը նոր երևույթներ չեն, և ի տարբերություն մոդեռնիստների, ազգայնականության հիմքը համարում են էթնիկ պատկանելիությունը և էթնիկ ինքնագիտակցությունը: Էթնոսիմվոլիզնի ներկայացուցիչ Է. Սմիթը ոչ միայն քննադատության ենթարկեց մոդեռնիզմի տեսությունը, այլև ներկայացրեց այն վեց հիմնական և կարևոր բաղադրիչները [6], որոնք ընկած են ազգի հիմքում.

- ընդհանուր անուն,
- ընդհանուր պատմություն,
- ծագման ընդհանուր առասպել,
- ընդհանուր մշակույթ,
- ընդհանուր տարածք,
- միասնության զգացում:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ ազգայնականության ծագման մասին ընդհանուր տեսություն գոյություն չունի և տեսությունների հիմքում հիմնականում ընկած է այն փաստը, թե գիտնականն

ինչն է համարում ազգայնականության հիմքը՝ մշակույթը, թե քաղաքականը:

Դիտարկելով որոշ մարզաձևեր՝ նկատում ենք, որ սպորտն ունի ինչպես միավորելու, այնպես էլ ազգայնական կրքերն ու նախապաշարմունքները սնուցելու արտասովոր ունակություն: Ըստ որոշ մասնագետների՝ գլոբալիզացիայի դարաշրջանում ազգայնականությունն աստիճանաբար պետք է վերանար՝ իր տեղը զիջելով միացյալ, համազգային մշակույթին, և այդ գլոբալիզացիայի ամենավառ դրոշակակիրը պետք է դառնար սպորտը՝ որպես համամարդկային երևույթ: Բայց հասարակության գլոբալ սոցիալական և քաղաքական կյանքի փոփոխությունները բերեցին քաղաքական և մշակութային ազգայնականության զարգացման: Ինչպես նշում էր Ալլան Գուտմանը, սպորտը ժամանակակից դարաշրջանի արտացոլանքն է, հետևաբար որպես սոցիալական երևույթ՝ վերջինս չէր կարող զերծ մնալ այդ փոփոխությունների ազդեցություններից [3]:

Սպորտային ազգայնականություն տերմինը գիտական ասպարեզ եկավ 1990-ականներին: Այստեղ ևս գիտնականները մեկ եզրահանգման չեն եկել, թե ինչպես կարելի է այս երևույթը բնութագրել: Եթե ամփոփենք, ընդհանուր առմամբ սպորտային ազգայանականությունը դիտարկվում է՝ որպես սպորտային միջոցառումների միջոցով ազգային տրամադրությունների և գաղափարների տարածման մեխանիզմ:

Եթե սպորտային ազգայնականությունը սկսենք ուսումնասիրել Մեծ Բրիտանիայի օրինակով, ապա պետք է փաստենք այստեղ գոյություն ունեցող ամենաակնհայտ խնդիրը, որը կարող է ազգայնականության դրդապատճառ դառնալ: Մեծ Բրիտանիան ունի մեկ օլիմպիական հավաքական, ֆուտբոլի չորս հավաքական և ռեգբիի երեք ազգային հավաքական: Օլիմպիական խաղերին Անգլիայի, Շոտլանդիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի մարզիկները հանդես են գալիս Մեծ Բրիտանիայի հավաքականի կազմում: Դրան հակառակ՝ ֆուտբոլում Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) և Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիայի (ՖԻՖԱ) կողմից անցկացվող բոլոր մրցումներում Անգլիան, Շոտլանդիան, Ուելսը և Հյուսիսային Իռլանդիան հանդես են գալիս առանձին հավաքականներով: Օլիմպիական ֆուտբոլի միացյալ հավաքականը գոյատևեց մինչև 1974թ.: 2012թ. փորձ արվեց հավաքականը վերականգնել, բայց այդ գաղափարին դեմ էին շոտլանդացիները: Շոտլանդիայի ՈՒԵՖԱ-ի ներկայացուցիչը հայտարարեց, որ միացյալ հավաքականը ոչ միայն վտանգում է շոտլանդական ֆուտբոլի ապագան, այլև կխթանի միջազգային ասպարեզից Շոտլանդիայի՝ որպես առանձին պետության գաղափարի անհետացմանը [4]: Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ միայն շեշտը

դրվեց Շոտլանդիայում մարզաձևի զարգացման խթանման, ազգային ֆեդերացիաների անկախությունը և եզակիությունը պահպանելու վրա, այլև հարց բարձրացվեց էթնիկության պահպանման վերաբերյալ: Փորձը ցույց է տալիս, որ ոչ բոլորն են գիտակցում, որ Մեծ Բրիտանիայի դրոշի տակ հանդես են գալիս 4 առանձին էթնոսներ: Շոտլանդացիների տեսակետը կիսեցին նաև իռլանդացիները և ուելսցիները: Ակնհայտ է դառնում, որ խնդիրը ոչ միայն ֆուտբոլն էր, այլև ազգային քաղաքական տարաձայնությունները: Այդ նույն ժամանակ ազգային կուսակցության ջանքերով անցկացվում էր Շոտլանդիայի անկախության հանրաքվեն: Այսինքն՝ մշակութային ազգայնականությունից հարցը տեղափոխվեց ազգային քաղաքականության դաշտ: Սպորտը՝ որպես այդպիսին, դարձավ այն թատերաբեմը, որտեղ, թե՛ մարզիկները, թե՛ երկրպագուները կարող են արտահայտել իրենց էթնիկ ինքնագիտակցությունը: Երբ Շոտլանդիայում ստեղծվեց առաջին ֆուտբոլային ակումբը, շոտլանդացիները բացասաբար էին վերաբերվում դրան: Ակումբի ղեկավարներին մեղադրում էին զավթողների կողմից ներմուծված խաղը մասսայականացնելու մեջ: Չնայած դրան՝ ֆուտբոլը կարողացավ գրավել իր ուրույն տեղը շոտլանդացիների սրտում՝ դառնալով իրենց ազգային գաղափարախոսության գործիքներից մեկը: Շոտլանդական ֆուտբոլի ամենահետաքրքիր հակամարտություններից մեկը հիմնված է ազգային-քաղաքական և կրոնական պայքարի վրա: Խոսքը՝ այսպես կոչված «The Old Firm-ի»՝ Սելթիկ-Ռեյնջերս հակամարտության մասին է: Հակամարտության արմատները ձգվում են կրոնական ռեֆորմացիայի ժամանակներ, երբ Շոտլանդիան դարձավ բողոքական երկիր, իսկ կաթոլիկությունը համարվեց օրենքից դուրս: Իռլանդական «Մեծ կարտոֆիլյան սովի» արդյունքում մեծ թվով կաթոլիկ իռլանդացիներ տեղափոխվեցին շոտլանդական Գլազգո քաղաք, որտեղ հիմնեցին հզոր համայնք՝ նոր թափ տալով բողոքականների և կաթոլիկների միջև ժամանակին մարած հակամարտությանը, որին գումարվեց նաև ազգային հակասությունները: Ֆուտբոլային Սելթիկ և Ռեյնջերս ակումբները ներկայացնում են այս երկու հակամարտող կողմերը: Սելթիկի հիմնադիրները կաթոլիկ իռլանդացիներն են: Զարմանալի չէ, որ խաղերի ժամանակ մարզադաշտում իռլանդական դրոշներ են ծածանվում և հնչում են իռլանդական ազգային բանակի երգերը, որոնց հիմնական սյուժեն արտացոլում է բրիտանական թագավորության դեմ պայքարը: Ռեյջերսը՝ հիմնադրվել է 15 տարի ավելի շուտ՝ բողոքական լոյալիստների կողմից: Վերջիններս Մեծ Բրիտանական թագավորության կողմնակիցներ են: Երկրպագուները՝ որպես պատասխան, մարզադաշտում ծածանում են Մեծ Բրիտանիայի դրոշը (Union Jack), որով նշում են իրենց քաղաքական հայացքները: Երկար տարիներ այս թիմեր չէին ընդունում այն

ֆուտբոլիստներին, որոնք «ճիշտ» կրոն չէին դավանում:

Եթե Շոտլանդիայի օրինակով մենք նշեցինք միջէթնիկ և միջկրոնական ազգայնականության դրսևորումները սպորտում, ապա Կանադան լեզվական ազգայնականության վառ օրինակներից է: Երկար տարիներ Կանադայում ֆրանկոֆոն հասարակությունը համարվում էր երկրորդ կարգի մարդ: Եվ ֆրանկոֆոն Քվեբեկ քաղաքի համար լեզվի և էթնիկ ինքնության պայքարի դաշտ դարձավ հոկեյի սահադաշտը: Ոչ մի մարզաձև կապված չէ կանադացիների ազգային ինքնության հետ այնքան, որքան որ հոկեյը [8]: Այստեղ պետք է շատ կարևոր երևույթ փաստենք, եթե սպորտը մասսայական չէ, որքան էլ որ հասարակությունը տարանջատված լինի, սպորտային ազգայնականության տարրերը մեղմ բնույթ են կրում:

Սպորտի վրա ազգայնականության ազդեցությանն է անդրադարձել Ջորջ Օրուելն իր «Սպորտային ոգին» էսսեում: Հակադրվելով օլիմպիական շարժման գաղափարներին՝ վերջինս պնդում էր, որ սպորտային մրցումները չեն կարող համերաշխության գաղափար կրել, քանզի մարդկային տարբեր խմբերի միջև անհանդուրժողականություն են առաջացնում մրցակցության պատճառով. «Սպորտը ոչ մի կապ չունի արդար խաղի հետ: Այն կապված է ատելության, խանդի, պարծենկոտության, բոլոր կանոնների անտեսման և բռնությանը ականատես լինելու սադիստական հաճույքի հետ: Այլ կերպ ասած՝ դա պատերազմ է առանց կրակոցների» [12]: Եվ որպես իր տեսակետը ապացուցող օրինակ՝ անդրադարձել է մոսկովյան «Դինամո» ակումբի և Լոնդոնի Արսենալի միջև ֆուտբոլային խաղին, որը կազմակերպվել էր Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում՝ երկու ժողովուրդների միջև բարեկամության ամրապընդման նպատակով: Սակայն իրականում տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Այս հանդիպման արդյունքում բրիտանական հասարակության մեջ հակասովետական տրամադրությունների աճ գրանցվեց և այն հանդիսացավ Ուինսթոն Չերչիլի Ֆուլտոնի ելույթի սկզբնաղբյուրը, որը նշանավորեց «Սառը պատերազմի» սկիզբը: Այս դրվագն այն վառ օրինակներից է, թե ինչպիսի մեծ քաղաքական ուժով է օժտված մեծ սպորտը: «Եթե ցանկանում եք սրել գլոբալ լարվածությունը, կազմակերպեք մի շարք ֆուտբոլային հանդիպումներ հրեաների և արաբների, գերմանացիների և չեխերի, հնդիկների և բրիտանացիների, ռուսների և լեհերի, իտալացիների և հարավսլավացիների միջև և մի մոռացեք երկու կողմերի երկրպագուներին հրավիրել: Իհարկե, նկատի չունենք, որ սպորտը համաշխարհային կոնֆլիկտների պատճառներից մեկն է: Կարծում եմ, որ ազգային հավաքականների մակարդակով համաշխարհային մրցաշարերը պարզապես ազգայնականության կողմնակի արդյունք են» [12]: Հետաքրքրիր է, որ նույն փորձը 2008թ.

կատարվեց Հայաստանում: Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղին ընդառաջ անգամ Արարատի պատկերը հանվեց հավաքականի լոգոյի վրայից: Այս «Ֆուտբոլային դիվանագիտությունը» ևս տապալվեց, ինչպես և լոնդոնյան նախատիպը: Բայց ի տարբերություն օրուելյան օրինակի, այս պարագայում դիվանագիտական հարաբերություններ արդեն գոյություն չունեին, հետևաբար վնասը այդքան մեծ չէր: Պարզապես բուն նպատակին հասնել այդպես էլ չհաջողվեց: Հակամարտություններ և նման խնդիրներ չունեցող երկրների միջև հանդիպումների դեպքում, սպորտային ազգայնականությունների փոխըմբռնումը կարող է բերել բարեկամության, քանի որ ազգայնականության վրա ազդում է միջավայրի քաղաքական, տնտեսական և մշակութային գործոնները: Ուստի, կարող ենք դիտարկել, որ ազգայնականությունը կայուն, կարծրացած երևույթ չէ և զանազան գործոնների ազդեցության տակ կարող է փոփոխությունների ենթարկվել: Օրինակ՝ իռլանդացիների ազգայնականության և սպորտի փոխկապակցվածության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս պարագայում մենք չենք կարող խոսել մեկ ազգայնականության մոդելի մասին: Այս պարագայում մենք գործ ունենք մի քանի բազմազան ազգայնականության մոդելների հետ, որոնք փոփոխության են ենթարկվում, փոխարինում են միմյանց և, դրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն պատմական և քաղաքական նպատակները և խնդիրները [9]: Այսինքն՝ ազգայնականության մոդելի փոփոխման հետ փոփոխվում է նաև «սպորտային ազգայնականությունը», քանզի վերջինս բխում է առաջինից: Իռլանդիայի պատմության ընթացքում գաելական սպորտն ակնհայտորեն ունեցել է ազգայնական ենթատեքստ: Կարող էր արգելվել խաղալ գաելական ֆուտբոլ, եթե անձը մինչ այդ խաղացել է ֆուտբոլ, կրիկետ, ռեգբի կամ բրիտանական ծագում ունեցող որևէ այլ խաղ:

Սպորտում ազգային քաղաքականության կամ քաղաքական ազգայնականության մասին խոսելիս չենք կարող անտեսել սպորտի պատմության ամենամեծ և ամենահայտնի իրադարձություններից՝ Օլիմպիական խաղերը: Օլիմպիական խաղերը ազգային քաղաքականության սպորտային մրցակցության մեջ ներթափանցելու վառ օրինակներից է, թեպետ և օլիմպիական շարժման գլխավոր գաղափարախոսությունը հակասում է ազգայնականության գաղափարին: Օլիմպիական շարժման գաղափարների տարածման ամենահիդեալական արդյունքն ինտերնացիոնալիզմն է՝ մարզիկների հավասար պայքար անկախ ազգությունից, կրոնից և լեզվից: Բայց, ինչպես նշում է Ռ.Վայրինեն, այս գաղափարը այդպես էլ իրականություն չդարձավ, քանզի օլիմպիական խաղերի պայքարը անհատականից վերածվեց գերտերությունների կողմից հեղինակության պայքարի [11]:

Այդ պայքարը երևում է օլիմպիական մեդալների ոչ պաշտոնական հաշվարկում: Մեդալների ոչ պաշտոնական հաշվարկը ՄՕԿ-ի կողմից չընդունված պայքար է պետությունների միջև վաստակած մեդալների հաշվին: Սա ոչ այլ ինչ է, քան սեփական «ես»-ը բավարարելու միտում: Հետաքրքիր է, որ գոյություն չունի մեդալների հաշվարկը վարելու մեկ ընդհանուր ձևաչափ, և յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում ինչպես հաշվել (ընդհանուր մեդալների քանակով, թե ոսկե մեդալների քանակով):

Սպորտի վրա քաղաքականության ազդեցության արդյունք են որոշակի մարզական միջոցառումներին ամբողջ ազգային հավաքականի մասնակցության հրաժարականը: Նման որոշումներ հիմնականում կայացվում է քաղաքական պատճառներով և ոչ մարզիկների կողմից: 1956թ. Մելբուռնում անցկացվող Օլիմպիական խաղերին հրաժարվեցին մասնակցել 7 երկրների հավաքականներ: Բողոքը խորհրդային զորքերի կողմից Հունգարիա ներխուժման դեմ էր: 1980թ. Մոսկվայի ամառային խաղերը նույնպես բոյկոտի ենթարկվեցին ԱՄՆ-ի կողմից: Այս անգամ պատճառը Աֆղանստան Խորհրդային Միության ներխուժումն էր: ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Կարտերը վերջնագիր էր ներկայացրել Խորհրդային Միությանը, որպեսզի զորքերը մեկ ամսվա մեջ դուրս հանվեն Աֆղանստանից, իսկ Իրանը և Լիբիան բոյկոտեցին խաղերը Իսրայելի հավաքականի մասնակցության պատճառով: Օլիմպիական խաղերին չմասնակցելու ԱՄՆ-ի կոչին միացան իսլամական երկրների մեծ մասը, Արևմտյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի որոշ երկրներ, նաև Կանադան, Ճապոնիան և Հարավային Կորեան:

Սպորտը նաև պետության հեղինակությունը բարձրացնելու շատ լավ մեխանիզմ է: Սա է պատճառներից մեկը, որ շատ երկրներ մեծ գումարներ են ծախսում, որպիսի հնարավորություն ունենան ներթափանցել հեղինակային մարզաձևերի գործունեության դաշտ: Քաղաքական և երկրի հեղինակությունը բարձրացնելու նպատակներով մարզիկների հաղթանակներն օգտագործելուն է անդրադարձել Պ. Սփենենեը՝ նշելով, որ այդպես են վարվում բոլորը և այս պարագայում կառավարման համակարգը ժողովրդավարական է, թե բռնապետական կապ չունի [10]:

Փաստացի սպորտը գործիք է դառնում սեփական ազգային գաղափարների, քաղաքականության տարածման, հեղինակության բարձրացման կամ ոչնչացման համար:

Եզրակացություն:

• Սպորտն ակտիվացնում է ազգային ոգին, դառնում է ազգայնականության սիմվոլներից մեկը և հակասում օլիմպիզմի գաղափարներին: Ազգայնականության դրսևորումները հիմնականում կապված

են տվյալ միջավայրում տիրող սոցիալական, քաղաքական և մշակութային գործոններից:

• Սպորտային ազգայնականությունը միավորում է ազգայնականության զանազան մոդելներ և ինքնության խնդիրներ, մասնավորապես՝ սրում է միջէթնիկ հարաբերությունները:

• Ելնելով օլիմպիզմի գաղափարախոսությունից՝ սպորտը վերցնում է միջազգային հարաբերություններում բարեկամական կապեր հաստատելու որոշակի ֆունկցիաներ: Սակայն սպորտը քաղաքական նպատակներով՝ որպես գործիք կիրառելիս՝ պետք է լավ ուսումնասիրվեն նախորդ փորձերը՝ սխալները չկրկնելու համար:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андерсон Б., Воображаемые сообщества. Размышления об истоках и распространении национализма. М.: 2001. - с. 107.
2. Геллнер Э., Нации и национализм, М.: 1991. - с. 1-29.
3. Гуттман А., Капитализм, протестантизм и современный спорт // Логос. – 2013. – №5. - с. 38.
4. Коростелев С., Национализм футбольной Европы //Вопросы национализма, 2014, № 20,.- с. 101.
5. Мудрик А. В., Социализация человека, М.: 3-е изд., 2010. - с. 7.
6. Смит Э., Национализм и модернизм: критический обзор современных теорий наций и национализма, М.: 2004. - 464 с.
7. Calhoun C., Nationalism and ethnicity //annu. Rev. Sociol. 1993. Vol. 19. - p. 211.
8. Dawson L. “The ‘Dominion Challenge’: Understanding Canadian National Identity Through the Development of Organized Hockey and the Birth of the Stanley Cup.” *NorthWest Passages*1(1) – 2014 – P.11-40.
9. Jarvie G., Sport, nationalism, and cultural identity, in: the changing politics of sport, ed. By I. Allison. Manchester: manchester university press, 1993, pp. 58–83.
10. Seppanen P., The olympics: a sociological perspective / international review for sociology of sport. – 1984. – № 19 (2). - p. 121.
11. Vayrynen R., Nationalism and internationalism. Sport and international understanding: proceedings of the congress held in helsinki, finland, july 7-10, 1982. Berlin: springer-verlag, 1984. - p. 64-71.
12. Orwell G., The sporting spirit [էլեկտրոնային ռեսուրս] https: //www.orwellfoundation.com/the-orwell-foundation/orwell/essays-and-other-works/the-sporting-spirit/.

NATIONALISM AND NATIONAL POLITICS IN SPORT

Lecturer A.V. Chakhmakhchyan
Armenian State Institute of Phisical Cultur and
Sport, Yerevan, Armenia

SUMMARY

Key words: sport nationalism, ethnic nationalism, national politics, national ideology, Olympic ideology, global sports culture.

The aim of the research is to explore the theoretical concepts and practical manifestations of nationalism and national politics in sport.

The research methods comprise study, analysis and literature review.

The analysis of research results. Changes in the global social and political life of society have led to the development of political and cultural nationalism. Sport is a reflection of modern society, so it as a social phenomenon could not avoid the consequences of these changes. Sport nationalism is generally seen as a mechanism for spreading national emotions and ideas through sporting events. Sports have played and continue to play a focal role in creating, maintaining and changing national identity.

Conclusion. Sporting nationalism can combine different patterns of nationalism and identity problems within a political structure. In countries where there is an unstable political system, sports nationalism can further exacerbate the situation. Based on the humanistic ideology of Olympism, sport assumes certain functions of establishing friendly relations between nations. While using tournaments as a tool for political purposes we should carefully study previous experiments to avoid repeating the same mistakes.

ПРОЯВЛЕНИЯ НАЦИОНАЛИЗМА И НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ В СПОРТЕ

Преподаватель А.В. Чахмахчян
Государственный институт физической культуры и
спорта Армении, Ереван, Армения

РЕЗЮМЕ

Ключевые слова: спорт, спортивный национализм, нация, этнический национализм, национальная политика, этническая идентичность, национальная идеология, Олимпийские игры, глобальная спортивная культура.

Цель исследования. Целью статьи является изучение теоретических концепций и практических проявлений национализма и национальной политики в спорте.

Методы и организация исследования. Изучение, анализ и обобщение научно-методической литературы.

Анализ полученных результатов. Спортивный национализм в целом рассматривается как механизм распространения национальных настроений и идей через спортивные мероприятия.

Спорт играл и продолжает играть важную роль в создании, поддержании и изменении национальной идентичности.

Краткие выводы. Спортивный национализм может сочетать различные модели национализма и проблемы идентичности в рамках политической структуры. В тех странах где есть нестабильная политическая система спортивный национализм может еще сильнее обострить ситуацию. Опираясь на гуманистическую идеологию олимпизма, спорт берет на себя определенные функции установления дружественных отношений между народами. При использовании турниров как инструмента в политических целях следует тщательно изучить предыдущий опыт, чтобы не повторять те же ошибки.

Հոդվածն ընդունվել է 29.03.2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 30.03.2022–ին: